ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն , որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար <<Երևանի թիվ 109 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման համար Կողմերի միջև 22.06.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/7 գնման պայմանագրում 2023 թվականի դեկտեմբերի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1	ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 2202-Ն որոշումը գրությունն
Փոփոխության նկարագրություն	Ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի N 2 հավելվածը
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.8 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
22.06.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/7 գնման պայմանագրի

ք. Երևան .21.12 2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 2202-Ն որոշումը և <<Երևանի թիվ 109 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման համար Կողմերի միջև 22.06.2023թ.կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/7 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի N 2 հավելվածը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011041820
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ք. Երևան, Կորյունի 19ա
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն՝

_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.